

ԿԱՐԾԻՔ

Արևիկ Կարոյի Հեքոյանի «Որոշումների ընդունման էվրիստիկ կարգավորման առանձնահատկությունները արժեթղթային փոխանակման գործարքներում» թեմայով ԺԹ.

00. 01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական սատիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Արժեթղթերի փոխանակման գործընթացը ֆինանսական գործիքների (բաժնետոմսեր, պարտատոմսեր, դեպոզիտար ստացականներ, ներդրումային ֆոնդերի բաժնեմասեր և այլն) գնման կամ վաճառքի ընթացակարգ է, որն իրականացվում է տնտեսական և հոգեբանական գործոնների ադդեցության ներքո: Ինչպես ցանկացած գործընթաց, այն ևս ընթանում է ոչ լիարժեք տեղեկատվության պայմաններում և ուղեկցվում անորոշություններով պայմանավորված այլընտրանքների ու ռիսկերի գնահատմամբ, ավարտվում անձի կողմից որոշումների ընդունմամբ: Վերջինս՝ որպես կոգնիտիվ և աֆեկտիվ դիսոնանսային իրավիճակում իրականացվող գործողություն, գործառնական առումով լինելով անգամ «ձեռնտու կամ բավարար», կարող է չհամապատասխանել անձի պահանջմունքներին: Պատճառն այն է, որ անորոշության պայմաններում չկարողանալով կատարել տեղեկատվության ամբողջական վերլուծություն և ակնկալվող արդյունքների (եկամուտների) հավանականությունների ճշգրիտ հաշվարկ, անձը դիմում է էվրիստիկ-ճանաչողական ռազմավարությունների և նախապատվություն տալով ծանոթ ընտրանքներին՝ թույլ տալիս սխալներ: Ակնհայտ է, որ որոշումների որակը կախված է ոչ միայն իրավիճակային տվյալներից (որոնք բոլորի համար նույնն են), այլ նաև անձի անհատական-տիպաբանական առանձնահատկություններից (հույզեր, ընկալումներ, մոտիվներ, հակումներ, խառնվածք, արժեքային համակարգ, կրթվածության մակարդակ, ինքնակարգավորման ոճեր, համոզմունքներ, դիրքորոշումներ, անորոշությունների և ռիսկի հանդեպ ունեցած վերաբերմունք, կենսափորձ և այլն):

Արժեթղթերի փոխանակման գործընթացում որոշումների ընդունմանն առնչվող հիմնախնդիրների հոգեբանական վերլուծությունները և հետազոտությունները հենվում են հիմնականում «սահմանափակ արդյունավետության» (Հ. Սայմոն), «հեռանկարների» կամ «էվրիստիկաների և հակումների» (Դ. Քանեման, Ա. Տվերսկի), «վարքագծային տնտեսագիտության» (Ս. Լիխտեյնշտեյն, Պ. Սլովիկ) տեսությունների վրա, համաձայն որոնց՝ ռիսկային պայմաններում անձն իր ընտրությունը կատարում է ոչ թե կոգնիտիվ, այլ աֆեկտիվ դրդապատճառներից ելնելով:

Արևիկ Կարոյի Հերոյանի «Որոշումների ընդունման էվրիստիկ կարգավորման առանձնահատկությունները արժեթղթային փոխանակման գործարքներում» խորագրով հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հոգեբանական գրականության մեջ անձի ներդրումային վարքն ուսումնասիրված է մասնակիորեն, այն էլ կամ հակումների, կամ ռիսկային պայմաններում նախընտրանքների, կամ հուզական արձագանքների մակարդակում: Համեմատաբար քիչ են այն հետազոտությունները, որոնցում ներդրումային վարքը դիտարկվում է որպես էվրիստիկ կարգավորումների, կոգնիտիվ նախընտրանքների, անձնային-տիպաբանական առանձնահատկությունների, ռիսկերից խուսափելու, ձևական իմաստավորման փոխկապակցված համակարգ: Ա. Հերոյանի պաշտպանության ներկայացված հետազոտության արդիականությունը նաև նրանում է, որ հայկական գիտական գրականության մեջ գրեթե բացակայում են ներդրումային վարքին նվիրված այնպիսի համակցված հետազոտությունները, որոնք իրականացվել են էվրիստիկ կարգավորման, ֆինանսական գրագիտության առկայության և անձնային-հոգեբանական տարբերությունների դիտակետով:

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, որի ծավալը կազմում է 154 համակարգչային էջ, բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, կիրառական առաջարկներից, սահմանափակումներից, գրականության ցանկից: Ատենախոսության վերջում գետեղված է հավելված՝ 31 էջ ընդհանուր ծավալով:

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, ներկայացված է թեմայի գիտական մշակվածության աստիճանը, մեթոդական և տեսական հիմքերը, ընտրանքի ընդհանուր բնութագիրը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները: Հետազոտության հիմնական վարկածն այն է, որ արժեթղթերի փոխանակման գործընթացում որոշումների ընդունումը պայմանավորված է ոչ միայն իրավիճակային և տեղեկատվական գործոններով, այլև անձի համեմատաբար կայուն հոգեբանական առանձնահատկություններով: Ենթադրվում է, որ անձնային տիպաբանական առանձնահատկություններով պայմանավորված կոգնիտիվ նախընտրանքները կապված են էվրիստիկ կարգավորման, ռիսկերից խուսափելու, անորոշությունները հանդուրժելու անձի հակվածության հետ, որոնց փոխկապակցվածությամբ էլ բնորոշվում է ներդրումային ոճը:

Ատենախոսության առաջին գլխում («Սպառողական վարքի և որոշումների կայացման հոգեբանական օրինաչափությունները»), որը բաղկացած է 7 ենթակետից, հիմնավորվում է

այն տեսակետը, որ որոշումների ընդունման գործընթացը պետք է դիտարկել որպես անձի համեմատաբար կայուն հոգեբանական կոնստրուկտների, փորձառության և ինքնակարգավորման կարողությունների փոխկապակցված դրսևորում: Գիտական վերլուծություններից ելնելով, հիմնավորում է, որ որոշումների ընդունումը չի կարող պայմանավորվել միայն իրավիճակային տվյալներով, և որ այն (որոշումների ընդունումը) հոգեկառուցվածքային, ճանաչողական, մոտիվացիոն և ինքնակարգավորման առանձնահատկությունների համադրման արդյունք է: Այս գլխում Ա. Կ. Հեբոյանն անդրադարձել է նաև որոշումների կայացման հոգեբանական մեխանիզմներին, ճանաչողական ոճերին, որոշումների ընդունման գործընթացում ներգրավված հուզական գործոններին:

Ատենախոսության երկրորդ գլխում («Արժեթղթային ներդրումների սիմվոլիկ-սպառողական և անձնային հիմքերը») ներդրողը դիտարկվում է որպես սպառման ոլորտի մասնակից անձ, իսկ արժեթղթային ներդրումը որպես նյութական սպառման առանձնահատուկ ձև: Անդրադարձ է կատարված սիմվոլիկ սպառման տեսությանը, որը հենվելով ապրանքներին և ծառայություններին մշակութային իմաստ վերագրելու դրույթի վրա, ներթափույց փոխկապակցվում է սոցիալական դիրքի իմաստավորման և ինքնահաստատման երևույթների հետ: Այս տեսանկյունից արժեթղթերը ընկալվում են ոչ միայն որպես եկամուտ ստանալու միջոց, այլ նաև որպես անձի սոցիալական կարգավիճակը և ինքնությունը իմաստավորող ռեսուրս: Այս գլխում հեղինակը հիմնավորում է այն տեսակետը, որ ներդրումային ընտրությունը կարող է ունենալ ոչ միայն գործառնական, այլև ինքնաարտահայտման և ինքնաիմաստավորման նշանակություն:

Ատենախոսության երրորդ գլուխը («Ներդրումային որոշումների հոգեբանական կարգավորումը արժեթղթային շուկաների ռիսկային և տեղեկատվական միջավայրում») նվիրված է արժեթղթային շուկաներում դրսևորվող հոգեբանական օրինաչափություններին, արժեթղթերի շուկայի տնտեսագիտական բնութագրիչներին, արժեթղթերի շահութաբերության կանխատեսման վրա ռիսկերի և ասեկոսենների ազդեցությանը, արժեթղթային ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման հոգեբանական մեխանիզմներին, շեղումներին, էվրիստիկ և տեղեկատվական աղմուկի ազդեցություններին: Արժեթղթային շուկաները դիտարկելով որպես տնտեսական, հոգեբանական և սոցիալական միջավայր, քննության են առնվում շուկայի անորոշության, այդ անորոշության պայմաններում ռիսկերի գնահատման, որոշումների ընդունման վրա տեղեկատվական հոսքերի և ասեկոսենների ազդեցության հարցերը: Հիմնավորվում է, որ արժեթղթային

շուկաներում անորոշությունների պատճառով ձևավորվող միջավայրը ստեղծում է ներդրողների համար անբարենպաստ հոգեբանական իրավիճակ, որում էվրիստիկաները՝ որպես արագ կողմնորոշման միջոց, դառնում են որոշման արդյունավետությունը խաթարող գործոններ: Երրորդ գլխում կարևորվում է ֆինանսական գրագիտության դերը: Ֆինանսական գրագիտությունը դիտարկվում է որպես այնպիսի կոգնիտիվ կոնստրուկտ, որը նպաստում է արդյունավետ վարքի դրսևորմանը:

Ատենախոսության չորրորդ գլուխը («Բաժնետոմսային փոխանակման որոշումների հոգեբանական առանձնահատկությունների և էվրիստիկ կարգավորիչների փորձարարական ուսումնասիրություն») նվիրված է հետազոտության փորձարարական փուլերին, միջոցներին, գործիքներին, գործադրված մեթոդներին, ռեսպոնդենտների համակազմին: Բերված են որոնողական և փորձարարական փուլերի արդյունքները, կատարված է փորձերի արդյունքների վերլուծություն: Առաջին՝ որոնողական փուլում, ճշգրտվել է այն նկարագրական նյութը (ներդրողներին հասանելի տեղեկատվական աղբյուրներ, գործիքակազմի հստակեցում, նախնական դիրքորոշվածություններ), որի հենքով ձևակերպվել են հնարավոր հարցադրումները և ընտրվել հետազոտության ենթակա այն հոգեբանական գործոնները, որոնք պետք է դիտարկվեն որպես բովանդակային փոփոխականներ: Երկրորդ փուլում իրականացվել են փորձագիտական հարցազրույցներ, որոնց նպատակն է եղել բացահայտել հայկական շուկայի այն առանձնահատկությունները, որոնք չէին կարող ի հայտ գալ մասսայական հարցումների ժամանակ: Երրորդ փուլում իրականացվել է էմպիրիկ ուսումնասիրություն, որի ընթացքում ուսումնասիրվել են ԱՄՆ-ի և Հայաստանի Հանրապետության ներդրողների տվյալները: Այս փուլը նվիրված է եղել անձնային, ճանաչողական և վարքային հնարավոր օրինաչափ կապերի բացահայտմանը: Կիրառվել են ինչպես քանակական, այնպես էլ որակական գործիքներ, հեղինակային հարցաթերթիկեր: Անձնային տիպաբանական առանձնահատկությունների գնահատման համար կիրառվել է MBTI (Miers-Briggs Type Indicator) մեթոդիկան (հարցաթանր), որը՝ ելնելով անձի մտածելակերպի և շրջապատի հետ նրա ունեցած փոխազդեցության առանձնահատկություններից դասակարգում է անձնավորության տեսակները: Փորձագիտական փուլում մասնակիցների ընտրանքը կատարվել է նպատակային ձևով. ընտրվել են այն մասնագետները, ոքեր առավել տիրապետում են հայկական շուկայի բովանդակային կառուցվածքին, ծանոթ են ներդրումային միջավայրի հոգեբանական առանձնահատկություններին:

Փորձարարական հետազոտության նախնական ընտրանքը կազմել է 132 մասնակից (112-ը ԱՄՆ-ից, 20-ը՝ Հայաստանից): Ֆիլտրման արդյունքում մնացել են $100 + 17 = 117$ -ը: Փորձարարական մասի քանակական տվյալները մշակվել են մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով և SPSS վիճակագրական էլեկտրոնային ծրագրերով: Փորձարկման փուլի տվյալների վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ Հայաստանի արժեթղթային շուկայի հոգեբանական բնութագրերը ձևավորվում են շուկայի կառուցվածքային սահմանափակումների, ֆինանսական գործընթացների սոցիալականացման թերի ընթացքի, ներդրումային շուկայի նկատմամբ հասարակական վստահության պակասի պայմաններում: Էվրիստիկաների և հակվածությունների (ատենախոսության մեջ այս եզրույթը հանդես է գալիս «կողմնակալություն», անվամբ) համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ թե՛ հայկական և թե՛ ամերիկյան խմբերում նկատվում են նույնանման միտումներ, սակայն հակվածությունների որոշ տեսակներ առավել արտահայտված են հայաստանյան մասնակիցների շրջանում: Չորրորդ գլխի վերջում պատկերված է ներդրումային վարքագծի կոգնիտիվ-սիմվոլիկ մոդելը: Հետազոտության արդյունքները եզրակացությունների տեսքով ձևակերպված են 8 կետերով:

Արևիկ Կարոյի Հեբոյանի ատենախոսությունը գիտական լեզվով և ռճով շարադրված ավարտուն աշխատանք է: Այն ունի ոչ միայն գիտատեսական, այլև գործնական նշանակություն և կարող է ելակետ հանդիսանալ անձի տնտեսական վարքի հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողների համար: Հեղինակի հրատարակած հոդվածները և ատենախոսության սեղմագիրը լիովին ներառում են հետազոտված հիմնախնդիրը և ամբողջությամբ արտացոլում ատենախոսության բովանդակությունը:

Անդրադառնանք ատենախոսության մեջ մեր կողմից նկատված որոշակի դիտողություններին և առանձնացնենք որոշ նկատառումներ:

1. Ատենախոսության շարադրանքում առկա են լեզվական (հիմնականում շարահյուսական) վրիպակներ, իմաստի ընկալման առումով՝ ձևակերպումների անհարթություններ և մեր կարծիքով՝ արհեստածին բառ-տերմիններ (օր. «անձի տեսական ըմբռնումը ... » (էջ 17, ներքևից 13-րդ տող), «...որոշումների ընդունման կառուցվածքում առանձնանում են մի շարք մեխանիզմներ, որոնք *միջնորդում են* ընտրական վարքը ... » (էջ 26, ներքևից 14-րդ տող), «Նրանց դատողությունները պայմանավորված են *ելակետային կետով* ... (էջ 29, վերևից 11-րդ տող)», «*գերափստահություն* (էջ 30, վերևից 10-րդ տող)», «Խարսխումը հանգեցնում է նրան, որ նախնական *թիվը*, կարծիքը կամ պատկերացումը ... (էջ 30, ներքևից 10-րդ տող)»,

« ... այլ որպես հոգեբանական իմաստով կառուցվող ինքնության, կարգավորման, սիմվոլիկ իմաստավորման և փորձառական ներգրավվածության հետ կապված վարքային դաշտ: ... հաշվարկի և արդյունքի առավելագույնացում» (էջ 36, վերևից առաջին պարբերություն), «Միջին ինքնահամահունչության տեսությունը ցույց է տալիս, որ ապրանքի կամ օբյեկտի նկատմամբ նախընտրությունը բարձրանում է այն դեպքում, երբ տվյալ օբյեկտի սիմվոլիկ պատկերն ընկալվում է որպես համապատասխան անհատի իրական, իդեալական կամ սոցիալական «ես»-ին (Sirgy):» (էջ 37, ներքևից 4-րդ տող), «... մշակութայինորեն» (էջ 39, ներքևից 6-րդ տող), էջ 97-ում տրված նկար 4.2.-ը վերնագրված է «մասնակիցների ժողովրդագրական բաշխում», բայց տրված է ըստ սեռերի մասնակիցների տոկոսային բաշխումը:

2. Անձի տիպաբանական բնութագիրը ներառում է նաև նրա էթնոհոգեբանական (ազգային) առանձնահատկությունները: Յուրաքանչյուր էթնոս, յուրաքանչյուր ազգ ձևավորում է իր հոգեկերտվածքին և արժեհամակարգին համապատասխան տնտեսական մշակույթ և վարքագիծ: Ազգային հոգեկերտվածքի անբաժանելի մաս են կազմում նաև ազգային դիրքորոշումները, որոնք ուղղորդում են մարդուն գործունեության ձևերի և միջոցների ընտրության հարցում: Ցանկալի կլիներ, որ հետազոտության մեջ դիտարկվեր նաև փորձարկվող երկու խմբերում էթնոհոգեբանական տարբերություններով պայմանավորված գործոնների դերը և պարզվեր ներդրումային գործընթացում ընտրության արդյունավետության վրա այդ տարբերությունների ազդեցության չափը:
3. Չի՞ ազդել արդյոք քանակական առումով մասնակիցների անհամամասն ընտրանքը (100-ը 17-ի հարաբերություն) արդյունքների ընդհանրացված իրական պատկերի ձևավորման վրա:
4. Տեղայնայնացվե՞լ են արդյոք հետազոտության մեջ օգտագործված անգլերեն հարցարանները հայալեզու փորձարկվողների համար, և եթե ոչ, ապա ինչպե՞ս է լուծվել հայ ռեսպոնդենտների կողմից անգլալեզու հարցարանների բովանդակության աղեկվատ ընկալման վախճության հացը:

Նշենք, որ նշված դիտողությունները և նկատառումները մասնավոր բնույթի են և որակական առումով չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը:

Գտնում ենք, որ Արևիկ Կարոյի Հեբոյանի ԺԹ. 00. 01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Որոշումների

ընդունման էվրիստիկ կարգավորման առանձնահատկությունները արժեթղթային փոխանակման գործարքներում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, և ատենախոսության հեղինակ Արևիկ Կարոյի Հեբոյանը արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս

հոգեբանական գիտությունների թեկնածու



Կարլեն Վաղարշակի Ոսկանյան

Կ. Վ. Ոսկանյանի ստորագրությունը հաստատում էմ

«Ինովացիոն կենտրոն» հիմնադրամ
կրթական ծրագրերի համակարգող



Նարինե Սողոմոնյան

26.06.2026 թ.